

ների սրտերը ևս պայծառանում և սիրով էին լցւում։ վերջապէս մեռաւ Վարվառը։ Մարդկանց բազմութիւնը արտասուքը աչքերին յուղարկաւորեց նրան գերեզման։ Այնուհետեւ երկար ժամանակ նրանք յիշում էին հեղ ծերուկին, որը իւր անկեղծ, սրտանց տուած խրատներով, շատ լոյս էր մտցրել նրանց կեանքի մէջ։ Տայ Աստուած, ընթերցող, որ մեզ համար ևս անհետ չանցնի այս պատմութիւնը։

Պետրովից քաղմ. Գրիգոր Բեկյ. Նոր-Արեւեանց.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ր

Եւ թեմեր.

Յունիոյ 22-ին Թիֆլիզ ուղևորուեց Նորին Վեհափառութիւն ազգիս ծերունաղարդ Հայրապետը՝ ուղեկցութեամբ Գէորգ արքեպիսկոպոսի, Նահապետ եպիսկոպոսի, Յուսիկ և Կորիւն վարդապետների։ Նորին սուրբ Օծութեան ուղևորութեան նպատակն էր այցելել անձամբ Նորին պայծառափայլութեան Կովկասի Փոխարքային, շնորհաւորել նրա գալուստը և փութացնել եկեղեցական կայուածոց և դպրոցների վերաբացման խնդիրը։

Յունիսի 25-ին՝ երբ Վեհափառ Հայրապետը պալատ պէտք է գնար այցելութեան, Փոխարքան ուղարկել էր մի խումբ կողակներ, որոնցից երեք հոգի դրօշակով պէտք է գնային առաջից, իսկ մնացածները Վեհափառի կառքի ետեւից։

Վեհափառի շքախմբի մէջ էին նաեւ Թիֆլիզի թեմի առաջնորդ գեր. Գարեգին եպիսկոպոս Սաթուհեանը և տ. Սահակ վարդապետը։

Պայծառափայլ Փոխարքան արժանաւայել ընդունե-

լուծիւն ցոյց տալով Վեհափառին, ընդունեց Հայրապետական օրհնութիւնը և լսեց Նորին սրբութեան խնդիրը, որոնց մասին տրուեց նաև առանձին գրութիւն:

Այնուհետև Վեհափառն առաջնորդուեց կոմսուհու սենեակը, որտեղ օրհնեց Նորան և բարեհաճեց սուրճ վայելել: Ընդունելութեան ժամանակ թարգմանի պաշտօնէր վարում կովկասեան գրաքննական կոմիտէտի աւագ գրաքննիչ Ն. Գ. պ. Աղէքսանդր Քիչմիշեանը:

Կէս ժամից յետոյ Նորին Սրբութեան փոխայցի եկան Ն. պ. Փոխարքան և իւր ամուսինը, որոնք ընդունուեցին հանդիսաւորապէս և թեմակալի առաջնորդութեամբ հրաւիրուեցին Վեհի ընդունարանը:

Տեսակցութիւնը տեւեց մօտ կէս ժամ: Այնուհետև Ն. պ. Փոխարքան և իւր ամուսինը ցանկացան մտնել Վանաց մայր եկեղեցին, աղօթել, համբուրել ս. Յակովբայ աշը, որից յետոյ դիտեցին կովկասեան հայ հերոսների գերեզմանները և ապա վերադարձան պալատ:

Յունիսի 27-ին Նորին Սրբութեան այցելեց կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Ն. Գ. Սուլթան Կրիմ Դիրէյը: Տեսակցութիւնը տեւեց մօտ քառասուն րոպէ և վերաբերում էր գլխաւորապէս եկեղեցական կալուածօց և դպրոցների խնդրին: Նորին Դերազանցութիւնը բացարձակապէս վստահացրեց, որ մինչև սեպտեմբեր կը վերադարձուն եկեղ. կալուածներն ու կը բացուին դպրոցները, միայն թէ պէտք է ներկայացնել դրա համար դպրոցների կանոնադրութիւնը և մշակել նրանց ծրագրերը: Նորին Վեհափառութիւնը հարկաւոր կարգադրութիւններ անելով, սպասում է այդ խնդիրների աւթի թիֆլիզում Տ. Փոխարքայի մօտ կայանալիք ժողովների, որտեղ հրաւիրուելու են նաև Վեհի կողմից լիազօրներ:

Յունիսի 28-ին Ս. Էջմիածնից Շուշի մեկնեց Ղարաբաղի թեմի առաջնորդ գեր. Աշոտ Եպիսկոպոս Շախնանը:

Թիֆլիզում այցելելով Կովկասի Տէր Փոխարքային, սրբազանը խնդրել էր Շուշուայ թեմական դպրոցի վերաբացման մասին, որի համար և ստացել է դրական խօստում: Նորին սրբազնութեան ընդառաջ էր եկել Թիֆլիզ Նուխուայ վիճակի փոխանորդ տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանը:

Նախիջևանի գաւառից վերադարձաւ և Երևանի գերեալ Նահանգապետ պրինց Նապօլէօնի թոյլտուութեան համաձայն իրերով նպաստ հաւաքելու համար Աղէքսանդրապօլ մեկնեց տ. Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանը, որ մեծ քանակութեամբ իրեր էր ժողովել նաև Երևանում: Մեսրոպ վարդապետն Աղէքսանդրապօլից գնաց Թիֆլիզ Տ. Փոխարքային ներկայանալու, նկարագրելու Նախիջևանի գաւառի հայ ազգաբնակչութեան ծանր կացութիւնը և խնդրելու, որ գաղթականների օգտին ժողովուած դրամների մնացորդը՝ յատկացուի ներկայ կրտորածից փաստաւածներին:

Որովհետև տ. Սահակ վարդապետ Բաղդասարեանի հաստատութիւնը Գանձակի փոխանորդութեան պաշտօնում՝ արգելքի հանդիպեց, այդ պատճառով Գանձակի փոխանորդութեան համար առաջարկուեց և հաստատուեց Հոգեշնորհ տ. Կորիւն վարդապետը որ տասն և ութ տարիներից հետէ գտնուում էր Վեհափառ Հայրապետի անձնական ծառայութեան մէջ և շուրջ ութ տարի վարում էր Հայրապետական Դիւանապետի պաշտօնը: Տ. Կորիւն վարդապետը ներկայ յուլիս ամսին իւր խնդրանաց համաձայն արձակուեց այդ պաշտօնից և Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նշանակել նրան Գանձակի վիճակի Առաջնորդական փոխանորդի պաշտօնին՝ նախապէս ստացած լինելով Տ. Փոխարքայի գրաւոր հաճութիւնը: Հ. Կորիւնը օգոստոս ամսից արդէն ստանձնեց իւր նոր

պաշտօնը, որին կը ցանկանանք լիակատար յաջողութիւն
և կարողութիւն:

Գորւոյ փոխանորդի պաշտօնում նշանակուած է տ.
Խորէն վարդապետ Մուրադբէկեանը և առաջարկուած է
ի հաստատութիւն:

Տպարանական ժողովի նախագահ նշանակուեց տ.
Եղիշէ Ժ. վարդապետ Մուրադեանը, իսկ անդամ—տ.
Խորէն վարդապետ Մուրադբէկեանը:

Թաւրիղից յետ կանչուեց Սալմաստի փոխանորդ տ.
Մաշտոց վարդապետ Փափազեանը:

Թաւրիղի առաջնորդական փոխանորդ նշանակուեց
Մեսրոպ վարդապետ Մազսուտեանը:

Կովկասեան իշխանութեան Բարձրագոյն շրջաններում
վերջնականապէս վճռուել է տեղական սկզբնական դպրոց-
ներում դասաւանդութիւնը կատարել աշակերտողների
մայրենի լեզուով:

Կալկաթայից հաղորդում են Նոր Զուղայի լրաբերին,
որ Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ տ. Սահակ
արքեպիսկոպոսը շուտով մեկնելու է Կալկաթայից դէպի
Բատալիա:

Յուլիսի 20-ին Նորին Ս. Վեհափառ Հայրապետի
Դիւանապետ նշանակուեց տ. Յուսիկ վարդապետ Զոհրա-
բեանը:

Անցեալ ուսումնական տարուայ ընթացքում Մայր Աթոռի ձեմարանի գիշերօթիկ աշակերտաց թիւն էր 225, իսկ ուսուցչաց՝—19. ծախուց գումարը բացի սննդից 39,706 ռ. 92 կ. Երևանի հայոց Թեմական դպրանոցի աշակերտների թիւն էր 416, իսկ ուսուցիչները՝—21. տարեկան ծախուց գումարն էր 20,100 ռուբլի. Տփլիսի Ներսիսեան Հոգևոր դպրանոցի աշակերտաց թիւն էր 685, ուսուցչաց, 25. տարեկան ծախուց գումարը—34,613 ռուբլի:

Կառավարիչ Սենատը քննութեան առնելով, թէ որ եկեղեցական կալուածների վրայ պէտք է դրուին զեմակի կոչուած և քաղաքային տուրքեր, բացատրեց որ յիշեալ տուրքերից ազատում են՝ ոչ թէ միայն այն հոգերը, որոնք յատկացուած են Կառավարութեան կողմից եկեղեցական հիմնարկութիւններին, այլ և այն բոլոր եկեղեցական կալուածները, ինչ ձևով էլ նրանք ձեռք բերուած լինին, որոնք եկամուտ չեն բերում: Այնուհետև մօտաւորապէս որոշելով, թէ ինչ պէտք է հասկանալ եկեղեցական կայքերի եկամուտ ասելով, որի ստացումը զեմստովային և քաղաքային վարչութիւններին իրաւունք է տալիս տուրք պահանջելու, Կառարիչ Սենատը մատնանիչ արաւ, որ եկամուտի միակ ապացոյց համարում է սոյն կայքերի վարձով տալը, իսկ եթէ այդ հոգերը մշակուում են միաբանութեան կողմից և եկամուտ են բերում իրենց հողային արդիւնքներով, երբէք իրաւունք չկայ զեմստովային—քաղաքային տուրքերի ենթարկելու և պահանջելու¹⁾:

Զգաստութիւնը հետզհետէ դառնում է չափադանց կարևոր՝ ժամանակի հազար ու մի միջոցներով հարբեցող

¹⁾ Սենատի յիշեալ բացատրութիւնը արդիւնք է Պալատաւայի Նահանգի Զերնակովկա գիւղի ս. Վառվառա եկեղեցու միաբանութեան կողմից եղած բողոքի:

և թմրող մարդկութեան համար: Ամերիկայի թեմում հայ հարուստներից մինը յատուկ մրցանակ է նշանակել, ով որ մատչելի և հակիրճ կերպով ամենալաւ աշխատութիւն կը գրէի հարեցութեան դէմ: Յօդուածը պէտք է բաղկացած լինի հազար հինգ հարիւր բառից: Ժամանակ նշանակուած է հոկտեմբեր ամիսը: Արցանակի գումարն է 100 և 50 ռուբլի: Ռուսաստանումն էլ շատ տեղ գոյութիւն ունին զգաստութեան ընկերութիւններ, որոնք ամեն կերպ աշխատում են ժողովրդի միջից արմատախիլ անել այդ ամենասոսկալի ախտը և օճրագործութեանց 95⁰/₁₀₀-ի պատճառը: Դորա համար հրատարակուած են թերթեր, բրօշուրներ, կարգացում են դասախօսութիւններ և այլն: Պետերբուրգի գործարանների և արհեստաւորների բանւորները համաձայնութիւն են կայացրել բոլորովին հարբեցնող խմիչքներ գործ չ'ածել: Այդ միութեան մասնակցողների թիւը բանւորների մէջ արդէն հասել է 6000-ի:



ԿԱՐԱՊԵՏ ԵՂԵԱՆ:

Մայիսի 28-ին Ս. Պետերբուրգում կնքեց իւր մահականացուն Կարապետ Յարութիւնեան եղբանցը եօթանասուն տարեկան հասակում: Հանգուցեալը ծնուած էր Տփլիս Արցախից վերաբնակուած ընտանիքում 1835 թուի սեպտեմբերին: Աւարաելով Լազարեան ձեմարանի գասընթացը, նա մտել էր Ս. Պետերբուրգի համալսարանի Արեւերգիտական բաժինը և վերջացրել դոքտորի աստիճանով: Կարճատեւ սուսուցչութիւնից յետոյ նա ուսանողների համար հիմնեց հանրակացարան, որի տեսուչը եղաւ հէնց ինքը: Բայց այդ հանրակացարանը փակուեց

և մինչդեռ հանգուցեալ Կարապետը աշխատում էր արեւելագիտութեան ուսուցչապետի պաշտօն և մագիստրոսի աստիճան ստանալ, պաշտօնի կոչուեց ներքին գործոց նախարարութեան մէջ, որտեղ երկար ժամանակ ծառայելով՝ ստացաւ գաղտնի խորհրդականի աստիճան, Խննսուհական թուականներին նա ներքին գործոց նախարարութիւնից անցաւ լուսաւորութեան նախարարութիւն, որտեղ և եղաւ ի նախարարի խորհրդի անդամ։ Բացի պետական պատասխանատու պաշտօններից և արժանապէս վայելած յարգանքից, հանգուցեալը յայտնի էր որպէս քաջ հայագէտ և համարւում էր հայերէնի պալատական թարգման։ Նա ունի դիտնական յայտնի երկեր՝ Հայ ժողովրդի յարաբերութիւնը Պետրոս մեծի հետ, հրատարակուած ռուսերէն, Բռնի Միութիւն Հայոց Լեհաստանի և բաղմաթիւ լրագրական յօդուածներ։ Հայրենիքից կտրուած, երկար տարիներ ապրելով մայրաքաղաքում և լինելով ռուսական բարձր պաշտօնեայ, հանգուցեալը երբէք չէր դադարել հայ լինելուց և մարդկանց անգոյն դարձնելու ձգտող թեթեամիտ խմբի համոզման հակառակ, նա մնացել էր միշտ էլ լաւ պետական պաշտօնեայ՝ շատ աւելի լաւ, քան ընդարձակ Ռուսիայի հարազատ հայրենա-գանձարանասէրները, հանգուցեալը շատ մեծ մասնակցութիւն է ունեցած մայրաքաղաքների եկեղեցեաց կանոնադրութիւն մշակելու գործում և երկար ժամանակ վարած է նաև Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդի անդամի պաշտօնը։ Հանգուցեալ Կարապետ Եղեանի դռները միշտ բաց են եղել հայ ուսանողութեան առաջ, նրա տանը տարեկան մի քանի անգամ միշտ հնարաւորութիւն են ունեցել համախմբուելու հայրենիքից և ծնողներից կտրուած երիտասարդները և օգտուելով նրա խելացի խորհուրդներից, միշտ պատկառել են պ. Եղեանից և շատ շատերը զգոյշ մնացել նրա կծու նկատողութիւններին չ'արժանանալու համար։ Հանգուցեալը սրտով կապուած իւր մայր երկրի և ժողովրդի հետ, սրտին մօտ ընդունելով տաճկահայ եղբօր ուսման և յառաջադիմու-

թեան գործը, կարողացել է ազդել միջոցների տէր մարդկանց վրայ և գործադրել տուել նրանց կարողութիւնը ազգային կրթութեան և յառաջագիժութեան գործի վրայ: Նրա այս տեսակ գործունէութեան արդիւնքն է հանգուցեալ Սանասարեանի յայտնի Վարժարանը կարինում, որի խնամակալ և հոգաբարձու էր բարեյիշատակ Կարապետ Եղեանը: Նա էր խորհրդատու և ներշնչող Իզմիրեանի կտակի, որով նշանակուում և տրուում է Իզմիրեան մրցանակ հայրենի գրական և գիտական յայտնի երկերի և ուսումնասիրութեանց համար և որոշ դրամագլուխ է յատկացուած օրիորդաց կրթութեան համար: Հանգուցեալը մեծ համարում ունէր ուսւ բարձր պաշտօնեաների շրջանում. յայտնի էր որպէս պահպանողական և ընդունակ էր տարիներով ծածկելու իւր զայրոյթն ու դժգոհութիւնը:

Ս. Պետերբուրգի բարձրագոյն դպրոցների ուսանողները 1894 թէ 95 թուին որոշում են մի շնորհակալական ուղերձ ուղարկել եւրոպացի մի նշանաւոր պետական գործչի և մի քանի խորհուրդների համար դիմում են Պետերբուրգում մեծ յարգանք վայելող և ծերակոյտի անգամ հեղինակաւոր Կօնիին: Նա հարց է տալիս, թէ ինչո՞ւ ուսանողները չեն դիմել այդ խորհուրդների համար պ. Եղեանին և աւելացնում՝ պարոններ, ես ձեզ խորհուրդ կըտամ, որ ձեր այդ հարցերով դիմէք «Գերասիմ Արտեմիչին»։ Նա թէ և փոքր է մարմնով, սակայն շատ խելօք գլուխ ունի և միշտ կարող էր օգտուել նրա խորհուրդներով: Այո՛, ճիշտ է Կարապետ Եղեանը մեր երկու նշանաւոր գործիչների—Արծրունու և Զանչեանի նման մարմնով փոքր էր, բայց խելօք գլխի և գրչի տէր և միշտ հարազատ և զգայուն զաւակ իւր ազգի և եկեղեցու: Կարապետ Եղեանի մահուամբ հայ ազգը կորցնում է սակաթիւ գիտնականներից մինին, որը համեստ դիրքով միշտ եղել է հասարակական գործունէութեան ասպարիզում և թողել յայտնի արդիւնքն ու յետքը: Թաղումը կատարուեց Մոսկվայում Բեսսարաբիոյ առաջնորդ Ներսէս արքեպիս-

կողմից ձեռամբ, իսկ Մայր Աթոռում եղաւ յատուկ հոգեհանգիստ, որի ժամանակ դամբանական խօսեց Յուսիկ վարդապետ Զոհրաբեանը:

ՊՐՆ. ԿԱՐԱՊԵՏ ԷԶԵԱՆՅԻՆ ՅԻՇԱՏԱԿԸ

Կ. ՊՕԼՍՈՒՄ.

Թուրքիոյ Հայ մամուլին մէջ՝ կրթական և դրական ձեռնարկութիւններու առթիւ շատ յեղեղուած մեծ անուն մը եղած էր Եղեանց, որու մահուան հանգէպ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը իր ամէնէն աւելի նշանակելի արտայայտութիւնը ըրաւ, արտայայտութիւն մը վըշտակցութեան, յարգանքի եւ համակրանքի:—Հաղիւ հասած էր Պատրիարքարան Եղեանցի մահը դուժող հեռագիրը՝ Ս. Պատրիարք Հայրը, իբր Նախագահ ՍԱՆՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆՈՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ և Յ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ, ցաւակցութիւն յայտնեց հեռագրով՝ ուր որ անկ է և հրահանգ տուաւ՝ որ այդ երկու հաստատութեանց անունով երկու շատ ճոխ պատկներ զրուին հանգուցելոյն դադարին վրայ: Պաշտօնական կարգադրութեան մը համաձայն՝ Եղեանցի ութօրէքին՝ հոգեւոր պաշտօն մըն ալ կատարուեցաւ մայրաքաղաքիս մէջ, Բերա Ս. Երրորդութիւն եկեղեցին, Յունիս 7, ԳՇ. ճաշու ժամուն: Շատ հանդիսաւոր եղաւ այս հանգէտը: Կախապէս ամէն կարգադրութիւն եղած էր այս մասին. Ս. Պատրիարք Հայրը Ս. Վարժարանի Խնամակալութեան և Յ. Ի. Գ. Յանձնաժողովոյ անունով մահագոյժ աղօթք զրկած էր բաղմաթիւ հասցէներու, և Ս. Երրորդութիւն եկեղեցին մասնաւորապէս շտկուած էր՝ առաջադրուած հոգեւոր հանգէտին արտայայտութեան տալու համար պաշտօնական և շքեղ հանդամանք մը:

Ձենք հարծեր, որ նոյն իսկ Եղեանցի դադարին վրայ այսչափ պաշտօնական, այսչափ փառաւոր հանգէտ մը սարքուած ըլլայ: Թուրքիոյ Հայոց Պատրիարքը անձամբ մատոյց Ս. Պատարագը և ճիշդ ժամը 3 ին սկսաւ Հոգեհանգստեան պաշտօնը, որու աւարտումէն անմիջապէս ետքը խօսեցաւ Օրմանեան Իմաստութենէ ընտրուած բնաբանի վրայ իր իմաստալից դամբանական-ներբողեանը այնպիսի բաղմութեան մը, որ պաշտօնական և միանգամայն ժողովրդական էր: Մայրաքաղաքիս հայ հասարակութեան ամէն դատակարգէն, ամէն հաստատութե-

նէն, եկեղեցական թէ աշխարհական անձնաւորութիւններ և անհատներ ունէին իրենց ներկայացուցիչները (*): Ժողովուրդը խռնուած էր տաճարին այն մասին մէջ, որ իրեն վերապահուած էր: Ամէն ոք հոսպատէր Ա. Պատրիարքի խօսքերուն՝ ճանչնալու համար եղեանցը՝ վասն զի եղեանցի տնունը զորչափ ալ շատ յեղյեղուած մեր մէջ, բայց իր գործունէութեան նշանակուած թիւնը անծանօթ էր շատերուն: Եւ Ա. Պատրիարք Հայրը թէ իբր անձնական բարեկամ հանգուցելոյն և թէ իբր Առաջնորդ Կարնոյ և Կ. Պոլսի Պատրիարք՝ գործակից Ա Վարժարանի և Յ. Ի. Գ. Յանձնաժողովոյ գործերու մէջ՝ պատկերացուց եղեանցը: Ա. Պատրիարքի գամբանակութեանը, զոր ամփոփ կերպով հրատարակենք, զեղեցիկ յայտնութիւններ ունի և օգտակար թելադրութիւններ: Ամէնէն, աւելի նշանակելի կէտը սա է եղեանցի կեանքին և գործունէութեան, որ ան ծառայեց իր ազգին և եկեղեցւոյն հաւատարմապէս. և ծառայութիւնը կեդրոնացուց իր թաղի և գրական գործերու մէջ. գործեր՝ որոնց մշակումը միայն բարի քաղաքացին կը կազմէ և կ'զարգացնէ:

Մենք որ անձամբ ճանչցած ենք եղեանցը՝ երբ վերջին անգամ Կ. Պոլիս եկաւ, գտած ենք այդ եղբորսեան կազմուածքի մէջ իր սկզբունքներուն վրայ յամառ անձնաւորութիւնը՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շուրջ բացուած բաւական տաք վիճարանութեան մը առթիւ: Ինքը հակառակ էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան և այս մասին իր տեսութիւնները միակողմանի էին, թէ և ի վնաս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ո՛ր և է գործօն դեր մը չէ՛ կատարած: Ինչ ալ եղած ըլլայ սակայն իր բմբուսումներն ու համոզումները Հայ եկեղեցւոյ Վարչութեան մասին, եղեանց այդ կողմէն, չէ՛ որ համբաւ կ'վայելէ: Եղեանցի գործունէութեան նկարագիրը թելադրութիւնն է: Գիտցած է ան օգտակար ծրագիր յղանակ և ատոնց գործադրութեան համար բարեսէր հարուստներու թելադրութիւններն ընել: Բարեբաւութեան տարբեր մէկ եղանակն է այս, զոր քիչեր միայն կրցած են մշակել: Այս եղանակով կապուած է եղեանցի տնունը Սանասարեան Մկրտչի և Իզմիրեանց Յովսէփի գործնական և հնչուն բարեբաւութեանց, որոնց արդիւնքով յառաջ եկած

(*) Յաւալի է՝ որ Հայ կաթողիկոսատարակութիւնը չէ՛ր պատասխանած եղած մասնաւոր հրաւերին, Վենետիկի եւ Վիեննայի Միաբարեան Հայրեր շատ լաւ կ'ճանչնային եղեանցը եւ ճանչնողներու շրջանակին մէջ ուշադրութիւն դրաւեց այս վերապահութիւնը, Մինչ Հայ-բողոքական Վեմ. Ազգապետը ամձամբ եկած էր:

հաստատութիւններ, պէտք է խոստովանիլ, թէ ամէնէն լուրջ գործեր են Թուրքիոյ Հայոց կրթական և գրական կեանքին մէջ:

Եղեանց իբր մատենագիր ալ թելադրող մը եղած էր: Տարակոյս չկայ՝ որ հետաքրքրական են եղեանցի անունը կրող այդ երկասիրութիւններ, որոնք կրնան իր որդեգիրներ նկատուիլ՝ քանի որ ամուրի մեռաւ եղեանց իր գրեթէ 70 տարեկան հասակին մէջ:

Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ հատարուած հոգևոր հանդէսը սերեմն կ'իշխատակէր և կ'փառաւորէր այնպիսի բարերարութիւն, մը կամ այնպիսի գործունէութիւն մը, որուն տպաւորութիւնը, ինչպէս հոս, նոյնպէս Ռուսիոյ Հայոց մէջ տեւական պիտի ըլլայ, հոն, ուր անշուշտ աւելի ծանօթ էր եղեանց թէ՛ գործով և թէ՛ մանաւանդ անձամբ:

Ահա Ս. Պ. Պատրիարք Հօր դամբանական-ներբողեանին ամփոփումը:

«Իմաստօրիւն շինեաց իւր տուն
եւ կանգնեաց ի նմա սիւնս եօրն»:

Իմաստունը իր այդ խօսքերով կ'հասկնէ՝ թէ իմաստուն ըսուելու համար պէտք եղած ձիւրքեր բազմապատիկ են և ցոյց կուտայ նոյն առեն՝ թէ իմաստուն մարդուն նկարագիրը հաստատուծ է կատարելութեան վրայ:

Պ. Կարապետ եղեանց այսպիսի իմաստուն անձերէն մէկն էր:

Թէպէտ ներկայ ընտիր բազմութեան մէջէն շատ քիչեր անձամբ տեսած կամ ճանչցած էին հանդուցեալը, այսու հանդերձ սրտի յուզումով մը հաւաքուած ենք այստեղ, ուր սրբաւայոյդ դադաղ մըն ալ չկայ, ուր ծանօթներու կոչն ալ զմեզ չէ բերած: Ինչո՞ւ ուրեմն այստեղ եկած ենք մարմնապէս մեզ անծանօթ մէկու մը յիշատակը մեծարելու, որ մեզ համար օտար երկրի մը մէջ մեռաւ:—Պատճառը յայտնի է: Կարապետ եղեանց հաւատարմապէս ծառայեց ոչ միայն իր պատկանած Պետութեան, այլ և իր պատկանած Եկեղեցիին, իր գործունէութիւնը կառավարական ծառայութեան սահմաններուն մէջ միայն ամփոփուած չմնաց, այլ նաև իրեն նպատակ ունեցաւ իր պատկանած համայնքին կրթական, գրական, բանասիրական և եկեղեցական կեանքն ու զարգացումը:

Սաղմոսերգուն մարդկային կեանքի սահման գրեր է 70-րդ տարին, և եղեանց ճիշդ ու ճիշդ այդ չափը լրացնելու վրայ էր. բայց այդ սահմանին չհասած, նա անցեալ տարի իր պատկան ծառայութեան 50 ամեակը կատարեց, որմէ կը հաս-

կացուի թէ շատ կանուխէն սկսած էր իր օգտակարութեան ասպարէզը: Իր կատարած յիսնամեակը թէպէտ պաշտօնապէս պետական ծառայութեանց չափն էր, սակայն իսկապէս իր ամբողջական արդիւնաւորութեան ալ չափն էր, զի ի սկզբանէ անտի շէր կատարած արդիւնաւոր ծառայութիւններ ընծայել Նիկեղեցւոյն, որուն զաւակն էր և հասարակութեան, որուն անդամն էր: Լազարեան ձեմարանին և Բեդրոպուրիի Համալսարանին մէջ յաջող և փայլուն ընթացքներ բոլորած և Մագիստրոսի ակադեմիական աստիճանով ճոխացած, իսկապէս գիտնականի տիպար եղած և հռչակն էր ստացած: Որպէս արեւելագէտ և բանասէր և պատմաբան երեւելի հանդիսացած էր և Ռուս Կառավարութեան կողմէ միշտ ինքը ներկայացուիչ կ'դրուէր Արեւելեան չեղուաց Միջազգային ժողովներու:

Գրական արդիւնաւորութեամբ կամ ինչպէս կ'ըսենք՝ երկասիրկութիւններով ալ հարուստ, տառնի չափ հատորներ կ'թողուէր որք իր անունը կ'կրեն և որք մ'նայուն և իրական արժանիք ունին:

Մեր մէջ բարեբախտապէս միշտ ունեցած ենք Կառավարութեան արժանաւոր պաշտօնատարներ և աստիճանաւորներ, որ սիրայօժար ժամանակ դառն են նաև իրենց պատկանած Նիկեղեցիին ու համայնքին օգտին համար աշխատելու: Օտար երկիրներու մէջ նուազագոյն է դժբախտաբար այդ դասակարգը, որով սխրալի բացառութիւնն էր Կարապետ Նզեանց, որուն բոլոր կեանքին գործունէութիւնն երկու հաւասար մասերու բաժնուեցաւ: Ինք մեզ սիրելի և ակնածալի եղաւ իր այն գործունէութեամբ, որ նպատակ ունեցաւ կրթական զարգացումն և Մայր Աթոռոյ մեծագոյն պէտքերուն ու շահերում գիտակցութիւնն ու հոգածութիւնը և խորհրդական ու օժանդակ հանդիսացաւ Մայր Աթոռոյ Հայրապետներուն և եկեղեցական պէտքերում ամէն կարևոր պարագաներու մէջ, օժան եկեղեցական զարգացման, ոչ միայն իրեն մօտ, այլ և իրմէ հեռու կողմեր, օգտակար միշտ նաև մեր կողմերում: Ինքն եղաւ թելադիր Տիխիսի Յովնանեան աղջկանց Կրթարանին և հախիժեանի Գորոյեան Հաստատութեան, որոնց առաջինը միշտ փայլուն և օգտակար շարունակութիւն ունի: Ինքն եղաւ թելադիր բարերար Սանատարեանցին՝ համանուն կրթարանն հիմնելու, ինքն եղաւ Յովսէփ Իզմիրեանցին՝ համանուն գրական և կրթական հիմնարկութիւնը կազմակերպելու: Եթէ այդ բարերար անձեր նոյն հաստատութեանց մարմինն ընձեռեցին իրենց առատաձեռն և յօժարակամ գումարներով, հոգին Նզեանցն էր, որ

յորդորեց, համողեց, ծրագրեց, կարգադրեց, առաջնորդեց և գործադրեց: Եւ ոչ այս հաստատութեանց հիմնարկութեամբ միայն, այլ և շատ և շատ արդէն հիմնուած հաստատութիւններ օգտակարագոյն իր ձեռքով նպատաւորութեան նշանաւոր կերպով և օգտակար ձեռքով: Իմաստուն՝ բառին կատարեալ իմաստով, շատ հեռուն կ'տեսներ և իր ծրագիրներն հիմնադէս կ'կազմէր. Սանասարեան Վարժարանին հիմնարկութենէն առաջ անոր ուսուցիչներն ու անօրէնները կրթել կուտար Բերմանիոյ մէջ: Այս ամէն հաստատութեանց ապագան ապահովելու համար ամէն ինչ կանխաւ խորհեցաւ և կարգադրեց: Ինչ որ իր իմաստութեան արդիւնքը կ'կազմեն՝ այն առաքինական ձիրքերն են, որ իմաստութեան տաճարին հաստակառոյց սիւները կ'հրաշակուին: Հաւատքը անոնց գլուխը, որ ոչ թէ ներքին զգացում մըն է միայն, այլ կ'ամփոփէ ինչ որ կրօնք, հաւատք և եկեղեցի կ'ըսուի: Անոր սիրտը կ'ծաւալէր ամէն կողմ, ո՛ր հաստատուած է Հայ եկեղեցին: Կատարեալ էր իր հաւատքը. տաք սրտով կ'վերաբերէր զէպ ի Մայր Աթոռ, և ատոր անձուկ օրերուն մէջ խորհրդատու մըն էր և դժուարութեանց և ելից հնարներ ցոյց տուող, անկեղծ հաւատացեալ դաւանէր եկեղեցւոյ: Յոյսը կ'զօրացնէր անոր գործունէութիւնը և կ'առաջնորդէր անոր աշխատութեան, զինքը կ'մղէր օգնութեան ձեռք երկնցնելու ուրումնատենչ նոր սերունդին. այնպէս որ իր շնորհիւ բազմաթիւ հայ երիտասարդներ ուսում ստացած են Համալսարաններու մէջ: Ապագային կ'նայէր անքիթի նայուածքով, կանուխէն կ'պատրաստէր ապագային պէտքերը՝ վստահ անոնց իրականութեան. ապահովութեան միջոցներ էին իր ձգտումները՝ միշտ կռթնած յուսալից անկախութեան մը: Սէրը կ'վարէր անոր իր ձեռքը ամէն անոնց, որոնց կրնար օգնել՝ թէպէտ մեծահարուստ մը չէր ինքը, բայց հարուստ էր իր սիրտը և միջոցներ կ'թելադրէր իրեն՝ որ բարի խրատներ տայ Աղբիս հարուստներուն և առաքինութեան ու բարեգործութեան արարքներու մէջ կարապետ ըլլայ անոնց: Միջոց մը ուսանողներու օթարան մըն ալ կազմեց, առողջ մարմնոյ և առողջ հագուստ բարձրները պատրաստեց, և միշտ ապաւէն մը եղաւ իր բնակարանը ամէն տեսակ օգնութեան կարօտներու, զորս գիտէր անփոփել և չէր թերանար արժանատիութեան օգնելու գործին մէջ: Բարեխառնութեան առաքինութիւնը սիրելի էր իրեն, կրնանք ըսել թէ ինքը պետական ծառայութեան ժամերէն դուրս իր համայնքին համար միայն ապրեցաւ, վասն զի աշխարհային ամէն վայելքէ հրաժարեալ կեանք մը ունեցաւ. իր անձին համար դրամ չլատ-

նեց, և բոլորանուէր աշխատեցաւ օգտակար ըլլալու Հայ Եկեղեցւոյ, և ապրեցաւ անաղարատ ու մաքուր կեանքով. կատարելապէս ունեցաւ արդարութեան շնաշխարհիկ պարծանքը: Արիւթեան ոյժը զգաց միշտ իր ներսը: Աւելիք ընթացքը մաքուր նպատակի հետ կ'կազմեն մարդուն ներքին զօրութիւնը գերադանց արտաքին ամէն զօրութիւններէ: Խոհեմութիւնն ալ, որ գիտէ ներգաշնակ համաձայնութեան մէջ պահել զանազան պարտուց կոտարումը, կատարեալ էր իր վրայ: Հաւատարիմ ծառայող մը պետութեան՝ գիտողութեանց տեղի չտուաւ և հաւատարիմ ծառայող մը իր Եկեղեցւոյն և հասարակութեան՝ ընաւ շմեղագրուեցաւ պետութեան կողմէն: Այսպէս մերոյս կարապետի իմաստուն կատարելութեան և կատարեալ իմաստութեան եօթնասիւն տաճարը հաստատ և անսասան կերպով հիմնուեցաւ իր հաւատքին և յուսոյն և սիրոյն և բարեխառնութեան և արդարութեան և արիւթեան և խոհեմութեան առաքինական ձիրքերուն վրայ:

Յրհնեալ ըլլայ իր յիշատակը:

Աղօթենք՝ որ Աստուած միշտ մեր մէջէն անպակաս ընէ այսպիսի անշահախնդիր, անըստիւր, կարող, գործօն և հանրօգուտ անձնաւորութիւններ:

Մաղթենք հանգիստ իր հոգւոյն. և նա՝ որ ուրիշ բարիք ընողներուն աւատապէս կ'ըաշխէ իր արդութիւնները, հաշտակամը նայի ամէնուն ալ տկարութեանց վրայ, և իր յաւիտենական Բարութեամբ վարձատրէ մեր հանդուցելոյն հոգին»:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Քիւղանդիոնի մէջ կարգում ենք.

Մարաշ Ալըք տաղ լեռանց ստորոտի և մի քանի բլուրների վրայ շինուած գեղեցիկ դիրքով դարդարուն քաղաք է: Հիւսիսարեւելեան կողմից բղխում է Քառասուն աչք կոչուած աղբիւրների պաղուկ ջուրը:

Մարաշ ունի վեց եկեղեցի 10 քահանաներով, եկեղեցիների մէջ ամենից շէնն և բազմաթողովուրդն է յանուն Քառասուն մանկանց կառուցուածը, որ ունի նաև նորաշէն փառաւոր